

ները, ազգի եւ եկեղեցւոյ փառքին համար ձեռք բերուած այս բոլոր արգիւնքները, Աղլոտի ուղղա-
մտութենէն եւ անխարդախ զոհողութիւններէն
բխող այս բոլոր պայծառափայլ իրողութիւնները:

Աղլոտի Մատենադարանին նկարագիրը (ca-
ractère) սրչափ խրթին իր երեւոյթով, այնչափ
յստակ է իր էութեամբը: Եթէ գեղարուեստը
տկար է հոն, այս տկարութիւնը մենք կը գիտենք
20րդ դարու մէջ: Ընդհակառակը այն տկարու-
թիւնը զօրութիւն մը, յառաջդիմութիւն մըն էր
այն դարուն համար եւ արգիւնքը՝ Աղլոտի Գպրո-
ցին: Եթէ հայերէնի աղճատումը աններելի յան-
ցանք մ'է Աղլոտի Գպրոցին համար, այս յան-
ցանքը հայերէն լեզուի բնդհանուր անկումներուն
հետեւանքն էր: Հելլէն լեզուն եթէ կրցաւ Գաւիթ
Անյաղթի գպրոցին նկարագիրը կազմել ոսկեդարու
դռներէն ս'չա ա հեռաւոր միջոցի մը մէջ, տա-
րորինակ չէ որ Եզնիկէն դարերով հեռացած դա-
րու մը մէջ, երբ լատիններէն եւ իտալերէն լեզու-
ները կու գան մտաւոր կեանք մը սնուցանելու
Հայոց մէջ՝ ամէն հայենակ իրողութիւններէ հե-
ռու միջավայրի մը գիրկը, այն, տարորինակ չէ որ
հայերէնը կազապարուէր այդ լեզուներու վրայ,
որոնցմով գրուած գործերը նոր էին եւ կը հե-
տաքրքրէին՝ իբր աղբիւր գիտութեան եւ հմտու-
թեան: Եւ եթէ այս բոլոր գործողութիւններու
եւ իրողութիւններու շուրջը թշնամութիւններ
ու ատելութիւններ ալ կը բուսնէին, շատ ան-
գամ ազնիւ երեւոյթներու ներքեւ, գործունեայ
կեանքերու համար սովորական իրողութիւններ
են ատոնք: Աղլոտ կ'ամբաստանուէր իբր օտարամիտ
(= լատինամիտ): Ռամկութեան եւ սգիտու-
թեան յայտարարութիւնն էր այս: Ազգին բոլոր
լուրջ մասը, ազգին բոլոր մեծ ներկայացուցիչները
եւ ինքը, Աղլոտն ալ, իբր ճշմարիտ հայ, իբր
ճշմարիտ հայ Արդապետ մը եւ ներկայացուցիչը